



# Ա Ր Ա Ր Ա Տ Տ

Թիկ Թ. — Երջոն Ժ.Բ.

ՏԱՐԻ Ժ.Բ. — ՍԵՊՏԵՄ. 1.

## ԱՍՏՈՒԹՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ.

Լուեցիւ և խմացելու, որ ես եմ Առաքուած։ Այսպէս է խօսում Ստեղծողի ձայնը աշխարհիս այլեւ այլ պատահմունքների, մարդոց այլեւայլ վիճակների մէջ։ Խնչ որ երբ եւ իցէ ազգեր ու թագաւորներ ցանկացել են, սակաւ է պատահել, որ այն լինի, միշտ ուրիշ կերպ է կատարուել, ուրիշ կերպ եղել, եւ շատ սակաւ մարդիկ են համացել այդ, թէ ինչո՞ւ է այդպէս լինում։ Նոքա մարդու արած են համարել այն, ինչ որ Աստուած է արել, ինչ որ Աստուած է անօրինել, նոքա կարծել են, թէ փրկութիւնը, օր հնաւթիւնը, առաջները եղածի, հին ժամանակի մէջն է։ Նոքա կամեցել են հին ժամանակները բռնի յետ բերել, ուզեցել են հինը, առաջուանը առանց այլեւայլի նորոգել, հաստատել իւրեանց օրերումը, բայց աւելի անբաղդացրել են իրանց։ Խնչ որ մի անգամ Աստուածոյ ձեռքը կտարել էր, պէտք չէր, որ նորից շինուի, Թագաւորներն ու ժողովուրդները ամենայն ջանք ու ճիգն գործ են դրել, բայց հինը միւսանգամ այլ եւս չէ եղել։ իսկ նոր շինուածը, ամենի պահանջմանը հակառակ, միշտ աւելի ու աւելի հաստատուել է ու աւելի կատարեալ եղել։ Զուր են եղել նախապաշարմունքով լիր մարդոց սաստիկ գժգոհութիւնները. պատահել է ու եղել այն, ինչ որ պէտք է լինէր

ոչ աւելի, ոչ պակտու Ամենայն բան ունի իւր սահմանը. ոյ ոք չէ կարող այն կողմն անց կենալ ։ Ամենազօրաւոր մարդի ձանապարհը իւր ընթացքի մէջ կտրում է ու կանգնեցնում մի աներեւոյթ ձեռն:

Լռեցէք ու հասկացէք, որ ես եմ Աստուած: Դուք ձեր ամենայն զօրութիւնովն ու արուեստովն չէք կարող երգումն տալով ստիպել անդ կացած ժամանակին, որ յետ դառնայ ձեզ մօտ, իւր գերեզմանից դուրս գալով: Անմիտ են նոքա, որ այս օրուան բարիքը արհամարհում են աւելի լաւ բարիքի յուսովը, որ յետոյ կարելի է ունենան. բայց աւելի անմիտ են նոքա, որ այսօրուան բարիքը ամենեւին բանի տեղ չեն համարում այն պատճառով, որովհետեւ կամենում են, որ երեկուան օրը փոխուի ու կրկին անգամ վաղուան օրը գառնայ: Ե՞րբ է եղել, որ ժամանակի հոսանքը յառաջ գնայ կանգնի, կամ պատահել է, որ աշխարհիս ընթացքը երբեւիցէ գէպ ի յետ գնայ:

Հասկացէք Աստուծոյ անսրէնութիւնը. բարձրը ցածացնում է, ցածրը բարձրացնում: Ո՞վ է կարող նորան արգելք լինի եւ այն անել տալ, ինչ որ իւր կամքն է: Ի՞նչ կարող են անել ծովի ամենազօրաւոր նաւատորմիզները, կղրկի մի սաստիկ քամի, որ ալիքները գրգռելով մրրիկ կհանի եւ նաւերը այս կողմն այն կողմն կցրուի. ինչ որ ոչ մի մարդ մոփից չէ անց կացրել, այն է լինում, ինչ որ մարդու խելքով սարքած է, այն մնում այնպէս, առանց իւր նպատակին հասնելու, առանց կատարուելու: Ի՞նչ կարող են անել պատերազմի պատրաստ ահագին զօրքերը. մի կփչի նոցա վերայ, ու կոչնչանան: Նոցա գիտիներն ու զէնքերը դաշտերը կծածկեն. նոցա յաղթելը յաղթուիլ կդառնայ: Այսպէս է լինում Աստուծոյ կտմքը: Ի՞նչ են կարողացել անել պատուի ու փառքի համար հոգի տուող մարդիկը իւրետնց ամենայն խորամանգ հնարքներովն, կամ ի՞նչ է կարողացել անել իշխանութիւն ունեցողների բարակ հաշիւներով սարքած քաղաքականութիւնը: Մի չնչին բան ունայնացրել, ոչնչացրել է մարդոց մոքում դրած ու սարքած մեծ մեծ բաները. փոշու մի շամանդաղ՝ սարքած մեծ ժամացոյզը կանգնեցրել է. շատ անգամ նոցա ամենայն հեռատեսութեամբ արած հաշիները աչքի բան չերեւցող մի պատահմունքով ոչինչ են դուրս եկել:

Ամէն մի մարդ նախախնամութեան գործիք է։ Քո կամքգ քեզ զանից խլող չկայ քո գործիդ համար, բայց գործիդ հետեւանքը Աստուծոյ ձեռքին է։ Առեցէք, ասում է երկնաւոր Տէրը, եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստուած։

Ճանաչեցէք Նորան, որ մի է միայն, որ ամենայն բան առաջնորդող, տնօրինողն է, որ մեր գլխի վերեւում լուսի մէջ է բընակվում։ Որ միակերպ եւ նոյնչափովը դատում է թագաւորի ու յետին աղքատի գործերը։ Որ ամբողջ աշխարհի մեծ մեծտէրութիւնների ու երկիրների, որպէս եւ բոլորովին անտեսուած ու մոռացուած ընտանիքի լաւն ու վատը նոյնպիսի իմաստութեամբ տնօրինում։ Նա է աղատում դատապարտուած անմեղին, եւ ծածուկ չարագործին իւր քաշելու բաներովն լոյս աշխարհի առաջը հանում։ Երբ որ մի շիտակ, մի լաւ մարդ, նախանձոտ ու չար հոգիների զրպարտութեան զոհ է դառնում։ Երբ որ իւր վերայ եղած ցած ու զզուելի կարծիքից յաղթվում է եւ ոչ մի ճանապարհ չէ կարողանում գտնել իւր անձը արդարացնելու աշխարհի առաջին, որովհետեւ իւր վերայ լաւ շինած ու յարմարացրածը այնպէս է ցոյց տալի, որ իւր վերայ խօսուածից, գրուածից շատ ազատ եւս չէ, ու եթէ բերանը բաց անի իւր անմեղութիւնը եւ իւր վերայ եղած զրպարտութիւնը ցոյց տալու, իւր անձն աւելի մեղաւոր ցոյց տուած կլինի, քան թէ արդար։ Երբ որ աչքի չընկնող մի հանգամանք յանկարծ զըրպարտուածի կողմն է խօսում եւ նորան աշխարհի առաջին բոլորովին արդարացնում —, այս ամեն դիպուածներում ամեն մի մարդ յայտնի տեսնում է, որ Աստուծոյ մատը կայ, եւ նորա առաջնորդութիւնովն ու տնօրէնութիւնովն է ամենայն բան աշխարհիս երեսը։

Բայց ընդհակառակն, երբ որ բաղդաւոր մեղաւորը երկար ժամանակ կարողանում է իւր խաւարի գործերն առաջ տանելու, առանց յայտնուելու։ Երբ որ շահին շահ առնելով, ուրիշի ժառանգութիւն ձեռք ձգելով, այրիների նեղացնելով, անտէր որբեր զրկելով, կամ ուրիշի փողերը տակով անելով հարստանում է։ — Երբ որ ծածուկ դաւեր է դնում, որոգայթներ լարում, շիտակ ու պատուաւոր մարդին կարծիքի տակ ձգում, չքաւորին նեղում։ — Եւ յանկարծ տեսնում ես, որ մի ըովէ

միայն բաւական էր, որ նորա ամենայն արարմունքը ամենի առաջին յայտնուի, որ խայտառակուի. լուսի մի նշոյլ հերիք էր, որ ընկնի վերեւից չարագործի չարութեան բնակարանի աչքի յընկած մի ճեղքուածից, մին եւս տեսնես, բոլոր սեւ չարագոր. ծութիւնները լուսումը երեւեցան. — այս տեղ դարձեալ յայտնրվում է Աստուծոյ մատը, նորա առաջնորդութիւնն ու անօրէնսութիւնը: Երբ որ ցանկասիրութեան հետեւանքը անպատիւ անառակին վերջապէս բոլոր աշխարհի առաջին գէպի կախաղան է տանում. երբ որ անխոհեմութիւնով բերանից թուցրած մի խօսք, կամ մինչեւ անգամ օրեր ու տարի վրան անց կենա. լուց յետոյ պատահմունքով գտնուած մի նշան սպանութիւն արած մարդին աշխարհային գատաստան է մատնում, մի՛ կարծեր ամենեւին, որ պատահմունքով եղաւ այն ու այդ բանը. Աստուծոյ տռաջնորդութիւնն է, նորա անօրէնսութիւնն է. — Ամէն մի ծածուկ մեղաւորի գատաստանի գալու օրը կայ. ուզենայ իւր չարագործութեան վկաների գլխին լեռներ գլորի: Ճգիւ եւ իւր չարագործութիւնը միայն գիշերն, անլեզու պատերն ու անտառներն տեսած լինին. լեռներն փոշու պէս կցրուին ու չարագործութեան տեղն կբացուի կերեւի, ու այդ գործը կտեսնուի. պատերի քարերն նորա արած մարդասպանութիւնը կըհաստատեն վրան. անտառի տերեւները նորան կմատնեն. կայծակի նշոյլը, վրէժինդիր լինելով նորան, կընկնի կապոյտ երկնքից: Լուցէն+, ասում է երկնաւոր մեր Տէրն, և հասկացէն+, էմացէն+, որ էս էմ Աստուծոյ:

Ճանաչիր Աստուծոյ առաջնորդութիւնը, նորա անօրէնսութիւնը. հասկացիր, որ նա է միայն մեր ամենի Տէրը, որ կարող է քաշ քցած գլուխը բարձրացնել, կուրած սիրտը բժշկել, ուժից ընկածին զօրացնել, յայսը կորցրածին մխիթարել ու սիրտ տալ, մոլորուած, տարակուսածին ճանապարհ ցոյց տալ, անզէնք ու անպաշտականին պաշտպանել: Ոչ երկնքում, եւ ոչ երկրիս վերայ պատահմունք, կոյր դիպուած չկայ. մի ամենատես, իմաստուն, եւ մարդասէր զօրութիւն ու իշխանութիւն է, որ առաջնորդում է, տնօրինում ու կառավարում ամենայն բան իւր արդարութեան յաւիտենական օրէնքներովը. Թող մարդիկ միշտ իրանց թշնամական կիրքերովը միմեանց հակառակ վա-

րուին. թող սիսլը մի ժամանակ ճշմարտութեան աեղը փայլի. թող կեզտոտ ինքնասէր բազմութիւնը խրեանց դանկութիւններովն միմեանց հետ կռուին միմեանց հակառակին. ինչո՞ւ համար է սիրտգ դոդ բռնում, այ փոքրոգի մարդ. տնօրինոց Աստուած կայ նա է կամենում, որ այդպէս լինի:

Այսպէս կմնայ ու կյաղթի միայն այն ինչ որ բարի է, արդար եւ ճշմարիտ. Նատ անդամ արդէն փորձով իմացուել է, որ ունայն է ամենայն ջանք եւ զուր ամենայն աշխատութիւն սուտ ու ծուռ բանին ճշմարտութեան կերպարանք տալու. Միթէ չեն եղել բռնականեր, որ ամբարտաւան համահաճութիւնով իրանց գահիցը իրքեւ իմաստութիւն են հրատարակել իրանց յիմարութիւնը, իսկ ճշմարտութիւնը իրքեւ թագաւորական մեծութեան գէմ գործած յանցանք հալածել են, որպէս եւ մարդկային ամենայն իրաւունքները անամօթ ու անխիղճ կերպով ոտնակոխ արել անտանելի գոռոզութիւնով. Բայց նոցա փոշին աշխարհիս ամեն կողմի բամիները ցրուել են ու անյայտ արել, նոցա սերունդը ջնջուել է, նոցա անունն է միայն մնացել աշխարհիս մէջ, որ նոցա օրերի ծանր ու զզուելի յանցանքներն ցոյց տայ. Միթէ շատ անդամ փորձած չեն անձնասէր իշխանները ամբողջ ազգեր գէպ ի տգիտութիւն տանել այլ եւայլ միջոցներով, որ իւրեանց աւելի գիւրին լինի այն բազմութիւնը գերութեան շղթաների մէջ պահել. Բայց աշխարհիս հրամայողներուն եւ նոցա երազած յանգուգն երազներուն առաջը կտրել է յանկարծ մի հատ միայն Աստուածանից լուսաւորուած իմաստուն մարդու խօսքը, եւ նորա բերանից գուրս եկած շունչից աշխարհին հրամայողների երազած գօրութիւնն ու իշխանութիւնը ոչնչացել է. Նոցա որոտումները, խարոյկները, բանաերը, շղթաները, անէծքներն ու նզովքները զուր են եղել. ճշմարտութիւնը մարտիրոսների գերեզմանների վերայ իւր յաղթութիւնը արել է. Ուրեմն լեցէ+, ասում է մեր երկոնաւոր Տէրն, և ճանաչչէցէ+, ոչ ես եմ Ասպառած:

Ճանաչիր Աստուածոյ առաջնորդութիւնն ու տնօրէնութիւնը քո բոլոր զուր գուրս եկած ցանկութիւններիդ մէջ, ճանաչիր Աստուածոյ տնօրէնութիւնը քո բոլոր կատարուած յոյսերիդ մէջը. Ամենազօր սէրն Աստուածոյ ամենայն բան դէպ ի քո բա-

րին է առաջնորդում։ Մինչեւ անգամ այնաեղ, ուրոր քո սըրտիցդ արիւն է գնում քեզ պատահած անբաղդութիւնից, անտանելի ցաւիցդ, այնտեղ, ուր որ կտրվում են սուրբ կապերը, սիրտ սրտի, հոգի հոգու հետ միաւորող կապերը։ այնտեղ, ուր որ դու մենակ փակուած մի առանձին սենեկի մէջ արիւն արտասուք թափելով ձեռքերդ գէպի երկինք ես բարձրացնում ու հարցնում։ Ինչո՞ւ այս անտանելի անբաղդութիւնը իմ գլխին եկաւ, ինչո՞ւ եմ այսպէս այրվում, փոթոթվում, ես այս ցաւին գիմանալ չեմ կարող—, այս այսպիսի գրութեանդ մէջ եւս հասկացիր։ որ քո Աստուծոյդ տնօրէնութիւնն է, եւ թէ նորա ամենայն արածը առանց կատարեալ սիրոյ եւ իմաստութեան չէ։

Մարդոց ներքին արժանաւորութիւնը այնչափ հեշտ չէ ճանաչել, երբ որ մեք նոցա կըննենք այն կէտից թէ ինչ աչքովեն նոքա նայում անցկացածի ու ներկայի վերայ։ այլ թէ ինչ աչքով են մտիկ տալիս ապագայի վերայ։ Մարդս, ժամանակ վրան անցնելով, կարողանում է վերջապէս միսիթարուիլ իր գլխին եկած ու անց կացած բանին վերայ։ մարդս կարում է նոյնպէս ներկային եւս սովորել։ բայց հանդարտ մոռով ու հանդիստ սրտով չէ այն բանին վերայ, ինչ որ պիտի լինի։ Անց կացածն ու ներկան, որքան եւս սարսափելի էին ու են, արդէն եղած, կատարուած բաներ են իւր աչքի առաջին։ միայն մնում է հընազանդութեամբ ընդունել։ Արդէն միանգամ վէրքերը սաացել ենք, ցաւը սրտներումն է, մեր ունեցած կորուստները լաւ գիտենք թէ որչափ մեծ են։ բայց ապագան է անյայտ ու մութքան մեզ համար։ ով գիտէ, ինչ պէտք է բերի մեզ։ Արդեօք մեր ունեցած յոյսը բոլորովին պէտք է ոչնչանայ։ Արդեօք այն քիչն եւս որ մեզ մնացել է, այն եւս պէտք է կորցնենք։ Այն ժամանակի ու այն օրերի վերայ մտածելով, որ գեռ եւս պէտք է գան ու պէտք է տեսնենք, ամենից աւելի է լքանում, վհատում թուլասիրտ մահկանացու մարդս եւ այնով ցոյց է տալիս թէ որչափ սակաւ է նորա սրտի մէջ հաւատն ու յոյսը Աստուծոյ վերայ։ Սորա համար ճշմարիտ բարեպաշտութեան իսկական նշանն այն է, որ Քրիստոսի աշակերտը, իւր երկնաւոր վարդապետի տուած օրինակին հետեւելով, ամենայն իւր աչքը վախացնող վատ պատահմունքներում միսիթարուած օրտով ա-

դօթք անել կտրողանայ ու ասել, Հայր, ոչ թէ իմ, այլ քո կտմքը լինի:

Ապագայի մէջ անյայտ լինելը մեր համար Աստուծոյ շտատ մեծ բարերարութիւններից մինն է: Թէ մեր մարմնաւոր եւ թէ հսկեւոր կետնքի ընթացքի մէջ մեզ շարժում է բոլոր մեր ուժերը յառաջ գնալու համար բանեցնել: Եթէ որ այսպէս զլինէր, մեք կթուլանալինք: Եթէ որ մեք առաջու անից իմանայինք, թէ ինչ բաղդաւորութիւն կամ անբաղդութիւն կայ մեր առաջը, որ պէտք է մեզ պատահի, այդ բաղդաւորութիւնն ու անբաղդութիւնը իւրեանց արժէքը մեր համար կկորցնէին, այն արժէքը, որ Աստուծոյ ձեռին մեզ բարոյապէս կրթելու եւ դաստիարակելու միջոց է: Մեք պէտք է միայն կուրօրէն (աչքներս փակած) ընդունէինք մեզ պատահածը, առանց զգալու մեջ ցանկութիւն, եռանդ ու քաջութիւն, որ ջանանք հասնել գերագոյն նպատակի: Մարդիկը արգէն մարդիկ չէին լինիր, որովհետեւ պակաս կլինէր նոցա էական պայմանը որ ունին եւ պիտի ունենան մի սուրբ ձգտումի համար, այն ձգտումի, որով մեք անասուններից գանագանվում ենք: Ուրեմն որչոփ լաւ է մեր համար, որ աշխարհիս պատահմանքների յաւիտենական տնօրէնն ու կարգագովը աղագան մեզանից ծածկել է ամենայն խնամով:

Քո կողմանէ իբրեւ քրիստոնեայ հաւատարմութեամբ գործ կատարիր քո կոչմանդ մէջ. կատարիր քո պարտականութիւններդ անհաստատութիւն ամեննեւին չունենալով. սիրտդ մաքուր պահիր—ու մնացած ամեն բանի հոգացողութիւնը թողք քո երկնաւոր Նօրդ: Ուրախ եղէ+ յոյսէ մէջ, համբերող նէղո-նէ-ն մէջ, յետ մէ հաս+ աղօնէ+ մէջ: Այս սակաւ խօսքերով սուրբ Առաքեալն Պօղոս աւանդում է մեզ շատ վսիմ եւ իմաստալից մի խրատ: Այս խօսքերի մէջ պարզ ու պայծառ կերպով երեւում է այն միտքը, որ Փրկիչն մեր այնպէս փառաւոր կերպով կատարեց իրան յատուկ հաւարմութիւնովն գնալով մահի առաջը Գողգոթայ:

Ուրեմն ես պէտք է վախ չունենամ, որովհետեւ դու ես տնօրինողն ու առաջնորդովն—ամենայն բան, իմ Աստուծու ու Հայրս: Դու ես զրկովը վերեւից մարդոց գլխին գալու բանի այս

սարսափելի քամին, որ մեր վիճակի օդը վատացնող սեւ սեւ ամպեր է բերում, եւ Դու ես, որ Քո կամքովդ ծագում եռ եր կընթից մեր վերայ մեզ ուրախացնող արեգակն, որ մեզ շաւնչ է առնել տալիս եւ նորոգում: Ինչ որ մեզ տալիս ես, կամ մեզանից առնում, ամենն եւս իմաստութեամբ ու բարութեամբ ես անում: Ով իմ Աստուած, տուր ինձ զօրութիւն, որ իմ սէջս պատերազմեմ հաւատի բարւոք պատերազմը: Տուր ինձ կարողութիւն, որ ամենածանր ու անտանելի վիճակիս մէջ եւս Քեզ հաւատարիմ մնամ: Ես լռում եմ Քո առաջին թէ բազգաւորութեանս եւ թէ անբաղդութեանս մէջ, որովհետեւ ես ճանաչում ու հասկանում, որ Դու իմ Աստուածս ես:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

### ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐՈՒՅՑ.

• ԱՐԱՐԱՏ ., (Օգոստոս) .

Կարս գաւառի Տաճկաբնակ դիւցեմ, Նախընթաց չորս գիւղերէն զատ գրտնուած բոլոր գիւղերն ևս հայաբնակ եղած են զարուս սկիղըներն, և հետզհետէ Ռուսաց ու Օսմանցւոց մէջ պատահած պատերազմներումն Հայերն իրենց տեղերն թողած, անցել են Ռուսաստանի սահմանն: Այս գիւղերէն որոնց որ գիւղեղմանատներն ու եկեղեցւոյ հիւռունքն կը մնան, կը նշանակեմք պյս տեղ, որք են.

Պոզդուչ Պայշտարայ. Օրթայ - Ղալայ<sup>1</sup>). Եասսըճայ. Խօշայ - Բունար<sup>2</sup>). Քէքէճ<sup>3</sup>). Ազճայ - Ղալայ. Պաշ - Քեշ<sup>4</sup>). Վերին - Ըէն. Խաս - Գեշ. Պէ - զիրկէն - Կէշիս<sup>5</sup>). Կիւլլու<sup>6</sup>). Թողանլու. Ճաւլախ. Փարսադան. Ալի - Սո-

(1) Միշին բերդ կնշանակէ. որմէ կհետեւի թէ երկու կողմն ուրիշ մի բերդեր եւս կան:

(2) Կընշանակէ զոյգ աղբերակումք:

(3) Թերեւս Ցարօնեցւոյն յիշած կաճկաքտրն է, պյս գիւղին մօտ Տեօշ - Ղայոյ ասուած լեռնակի արեւելեան ստորոտումն վանաց աւերակ մի կայ, զոր խոնրկտուր կանուանն տեղացիք, որ է Խոնդրակատար Աստուածածին, ինչպէս Հայերն աւանդութեամբ կասեն: Այս աեզ ուխտեւք կըդիմեն բոլոր գաւառի ցաւագալներն եւ կը քժշկուին:

(4) Կընշանակէ մնձ դիւդ, կամ Աւան:

(5) Կընշանակէ վաճաւալանաց տնցք. Թերեւս հին ժամանակներն լին Տովի առեւտուակներն իրենց ապանքներն այս ճանապարհաւ կանցունէին վանանդոյ սահմաններն ձորդիք նաւարկութեան ժամանակներում. որ նոյն ճանապարհի բերուն է, եւ Թերեւս Օսմանցւոց տիրապետութենէն յետոյ եւս պյս տեղ մաքսատուն նշանակուած լինի:

(6) Ցաճկերէն դպրութեան մէջ կարելի է կարգալ Գարդենիք կամ Մոխիրնոց: